

Բնութիւն եւ ռասայ, որպէս պատմութեան ճակատներ.

Ամենահին ժամանակներից սկսած մարդկութեան մտածող անհատները նկատել և անձանագրել են բնութեան ազդեցութիւնը մարդու հոգու, երևակայութեան, նրա արտաքին և ներքին կազմուածքի վրայ: Աշխարհագրական դիրքը, հողի յատկութիւնները, կլիման և ընդհանրապէս ամբողջ բնութիւնը ամենամեծ չափով ազդում են մարդու՝ թէ անհատի և թէ ժողովուրդների գործելակերպի, մտածելակերպի վրայ, հետևապէս ստեղծում են պատմութիւնը: Բնական, աշխարհագրական ֆակտորն է, որից կախուած է զանազան ազգերի, զանազան ժողովուրդների կեանքը, նրա այս կամ այն կերպ գոյութիւնը: Այդպէս են ասում բնական ֆակտորի միահեծան կողմնակիցները: Դրանց կարծիքով, եթէ յոյները գիտութեան մէջ այնքան առաջ գնացին, պատճառն այն էր, որ նրանց հայրենիքում երկինքը միշտ պայծառ էր ու արևը ժպտուն, երկիրը իւր առատ պտղաւէտութեամբ ապահովում էր մարդու գոյութիւնը և ժամանակ տալիս հին յոյնին գործ դնելու իւր պարապութիւնը գեղարուեստի, բանաստեղծութեան, փիլիսոփայութեան շրջաններում:

Եթէ Հայաստանում այնքան շատ էին իշխանները, որոնք և շարունակ անընդհատ կռուի մէջ էին կենդրոնական իշխանութեան հետ, որի պատճառով շարունակ թոյլ էր Հայոց թագաւորների իշխանութիւնը գաւառներում, դա հետևանք էր զարձեւալ Հայաստանի աշխարհագրական դիրքին, նրա լեռնոտ դրութեանը, նրա բնական բաժանուածութեանը. իւրաքանչիւր լեռնաշղթայ այստեղ մի բնական սահման էր գծում երկու գաւառների, երկու իշխանութիւնների մէջ, ուստի և առանձնութեան, կենդրոնախոյս ուժի ձգտումը երկիրն ինքն էր տալիս բնակիչներին:

Այս և սրա նման պնդումները մինչև օրս զանազան ձևերով շարունակ հոլովուել են առանց բացառութեան բոլոր նրանց կողմից, որոնք Հայոց պատմութիւն են գրել կամ Հայոց պատմութեան որևէ շրջանը լուսաբանել աշխատել: Եթէ սեմական ցեղերը առաջին մոնոթէիստներից են, այդ ևս այն պատճառով է, որովհետև նրանք լայն և ընդարձակ, անսահման անապատների դաւալներ են, անապատների, որոնք տրամադրում են անհունութեան, անսահմանութեան, մի գերազոյն ուժի ապաւինելուն: Անապատներն իրանց միօրինակ գորշութեամբ, իրանց եզակի միապաղա-

դուժեամբ կարող էին մի հատիկ գերագոյն էակի միտքը ծնեցնել և ծագում տալ միաստուածութեան գաղափարին: Բնական ֆակտորի կողմնակիցները նոյն եղանակով բացատրում են նաև պատմութեան միւս բոլոր երևոյթները:

Բնութեան ֆակտորի պատմութեան վրայ ունեցած ազդեցութեան և ներգործութեան խնդրով, ինչպէս ասացինք, մարդիկ վաղուց է զբաղւում են. և այժմ էլ այս խնդիրը ոչ միայն իւր հետաքրքրութիւնը չէ կորցրել, այլ աւելի մեծ թափով մեր պատմաբաններից ու պատմափիլիսոփաներից ուսումնասիրւում է: Նոր ժամանակներում յատկապէս Մոնտեսքիէօն («Օրէնքների ոգին»), Բոկլը («Քաղաքակրթութեան պատմութիւնն Անգլիայում») և Կարլ Ռիխտերն եղան (նրա աշխարհագրական բազմաթիւ ուսումնասիրութիւնները), որոնք շատ զօրեղ կերպով պաշտպանեցին բնական ֆակտորի ներգործութիւնը ազգերի պատմական կեանքի վրայ: Մոնտեսքիէօյից է գալիս այն խօսքը, թէ «որ և է մոսկովացու զգայութիւն ներշնչելու համար հարկաւոր է նախ նրա կաշին քերթել»: Բոկլի գրքի բուն նպատակն է, ինչպէս նրա ներածական գլուխներից յայտնի է, մարդկային արարքների մէջ որոշ օրինաչափութիւն գտնել: Նա իւր ուսումնասիրութեան ընթացքում գալիս է այն հզօրացութեան, թէ «մի ներքին կապ կայ մարդկանց արարքների և բնութեան օրէնքների մէջ»: Որովհետեւ արտաքին-ֆիզիկական աշխարհն ու մարդու ներքին հոգեկան կեանքը այդպէս անխզելիօրէն իրար հետ կապուած են, ապա ուրեմն պէտք է արտաքին աշխարհի և ներքին աշխարհի ուսումնասիրութիւնը, ուրիշ խօսքով բնական գիտութիւնների և պատմութեան ուսումնասիրութիւնը միասին և միատեղ առաջ տանել: Նա ասում է. «Պարզ է, որ երևոյթների ամբողջ բազմազանութիւնը, ուրիշ խօսքով, բոլոր փոփոխութիւնները, որոնցով լի է պատմութիւնը, բոլոր օրհասները, որ մարդկային սեռին հանդիպել են, նրա առաջադիմութիւնն ու նրա անկումը, նրա բախտն ու նրա թշուառութիւնը~պէտք է, որ կրկնակի ներգործութեան արդիւնք լինին—մի կողմից արտաքին երևոյթների ներգործութիւնը մեր ներքին աշխարհի վրայ, միւս կողմից մեր ներքին աշխարհի ազդեցութիւնը արտաքին երևոյթների վրայ» (Գերմ. թարգմ. հատոր Ա, եր. 18): Ուրիշ խօսքով Բոկլն այստեղ շեշտում է հոգու և բնութեան փոխազդեցութիւնը:

Միջանկեալ ասինք, որ Բոկլը թէև աչքի էր ընկնում իւր ծայրայեղ միակողմանիութեամբ, սակայն այս բոլորով միասին պատմագիտութեան համար մեծ ռահվիրաների թւում կըմնայ նա շարունակ, որովհետեւ ուղիղ ճանապարհը փնտրողներից և գտնողներից էր, թէև այդ ճանապարհի վրայով նա անշեղ չէ

քայլել և շատ էլ չէ առաջագիմել: Նա իւր գրքով մեծ զարկ տուեց պատմափիլիսոփայական քննադատութեանը և նոյնօրինակ հարցերի կենդանի և եռանդուն լուսաբանութեանը. նա գրանով մեծ ծառայութիւն մատուցեց պատմական գիտութիւններին:

Իսկ Կարլ Ռիխտեր մի նպատակ և մի ըմբռնում ունի այս խնդրի նկատմամբ. նա աշխարհագրագէտի գերազոյն նպատակն է համարում—ուսումնասիրել և հետազօտել արտաքին աշխարհի ազդեցութիւնները մարդկային հոգու պատմութեան մէջ երևան բերած արտայայտութիւնների վրայ:

Նոյն ժամանակ, որոնք բնութեան ազդեցութիւնը միակ ֆակտորը ընդունելով, աշխատել են մարդկային կուլտուրայի պատմութիւնը ըստ այնմ դասաւորել, ինչպէս Մուժոլ, (Mougeolle, P. Les problèmes de l'histoire, 1886, Paris), որը կարծում էր, թէ քաղաքակրթութիւնը սարերից հովիտներն է իջել, կամ հասարակածից երկու կողմերն է տարածուել, այն ինչ գրա ըուրոպին հակառակն է տեղի ունեցել: Կամ ինչպէս Լէօն Մեշնիկովը (Léon Metschnikoff, La civilisation et les grands fleuves), որի կարծիքով քաղաքակրթութիւնն անցել է հետեւալ շրջանները. Գեսային (Նեպոտոս, Ասորեստան, Բաբելոն, Հնդկաստան Զինաստան), Միջերկրականի շրջան (Փիւնիկէ, Կարթագէն, Յունաստան, Հռոմ). ապա նա տեղափոխուած է Ասլանցեան ովկիանոսի ափերը (Եւրոպա և Ամերիկա). վերջում նա կընդգրկի ըուրո ծովերն ու ցամաքները:

Վերջին ժամանակներս այս խնդրով ամենից շատ և ամենից խոր զբաղուել է գերմանացի աշխարհագրագէտ Ֆրիդրիխ Ռացելը՝ Լայպցիգի համալսարանի նախկին պրոֆեսսորը: Նրա մանրամասն և հմուտ ուսումնասիրութիւնները մեծ լոյս սփռեցին ազդեցութիւնների և ներգործութիւնների այն չափի և եղանակների վրայ, որ բնութիւնը ունի և կարող է ունենալ մարդկութեան պատմութեան վրայ: Նրա գրուածքներից յատկապէս պէտք է յիշել «Քաղաքական աշխարհագրութիւն» և «Մարդաբանական աշխարհագրութիւն»:

Ըուրոպին պարզ և անվիճելի է, որ բնութիւնը թէ մարդու արտաքինի՝ նրա մարմնի և թէ ներքինի՝ նրա հոգու վրայ կարող է ազդել և ազդում է շարունակ: Սակայն անվիճելի է միւս կողմից և այն, որ այդ հաստատութիւնը չի կարելի պնդել ըուրո ժողովուրդների նկատմամբ և ըուրո ժամանակներում համահաւասար կերպով: Միևնոյն երկրի մէջ, աշխարհագրական նոյնպիսի պայմանների մէջ ապրող զանազան ժողովուրդներ տարբեր յատկութիւններ, բնութագրի տարբեր նկարագիրներ են հանդէս բերում: Բնական—աշխարհագրական ֆակտորի մասին խօսելիս

այդ թէորիայի կողմնակիցները շատ են հոլովում Յունաստանի պայծառ երկինքը, նրա մշտաժպիտ բնութիւնը մի կողմից, յոյնի ուրախ, գեղեցիկ ու գեղասէր երևոյթը միւս կողմից: Սակայն պատմական յայտնի իրողութիւն է, որ հին յոյներին նոր յոյները յաջորդեցին. ինչո՞ւ սրանք այժմ Եւրոպայի ամենայնուրեւ ընկած ազգն են համարեալ. ինչո՞ւ լուել է յոյնի բանաստեղծական քնարը, որի վրայ Հոմերոսն ու Էսխիլէսը, աննման Սոփոկլէսն ու Էվրիպիդէսն երգեցին. ինչո՞ւ չեն լուում մինչև այժմ աշխարհ զարմացնող յոյն քանդակագործի մուրճի ծանրախոհ և չափուած հարուածները. ինչո՞ւ արդի յոյնին օտար է միանգամայն Արիստոտելի և Պլատոնի աստուածային իմաստութիւնը: Չէ՞ որ նոր է հին յոյները աշխարհագրական նոյն պայմանների առկ են ապրում, չէ՞ որ նոյն գեղեցիկ արևն է տաքացնում նրանց ու նոյն կապուտակ, անամպ ու ջինջ երկինքը ժպտում: Ո՞ւր է Յունաստանի այն պտղաւէտութիւնն ու կուլտուրան, որ աշխարհ էր զարմացնում:

Բնորոշ է և սուր այս նկատմամբ Հեգելի դիտողութիւնը: Ձընդունելով բնական ուժի ամենազօրութիւնը նա գրում է. «Մի խօսիր ինձ յունական երկնքի մասին. իմացիր, որ այժմ թուրքերն են ապրում այնտեղ, որտեղ առաջ յոյներն էին. դրանով բաւականացիր, ու ինձ հանգիստ թող» (Vorlesungen über die Philosophie der Geschichte, Reclam, 63).

Մի ժողովուրդ միւսից կարող է աւելի ուժեղ լինել, կամքի աւելի մեծ ուժ ունենալ դիմադրելու բնութեան պատահարներին և արգելքներին, քան մի այլ ժողովուրդ: Հաննիբալի առաջ բացւում են նոյն իսկ մշտաճիւն Ալպերի բարձրաբերձ դռները, որոնք մինչև այդ փակ էին բոլորի համար. մի մեղկ և փափկասէր ցեղի համար որ և է գետ կարող է արգելք լինել, սահման դնել նրա առաջխաղացութեան, մի այլ ուժեղ և պատերազմասէր ժողովուրդ կարհամարհէ այդ արգելքը և կընդարձակէ իւր կալուածքը:

Կուլտուրայի ստեղծման գործում առաջին պայմանն է մարդու հոգեկան որակիւթիւնը, նրա սոցիալական հասարակական վիճակը ու ցեղային խմբական բնոյթը: Բնութիւնը, կլիման և կերակուրը, հողն ու օդը միշտ երկրորդաբար են գալիս: Կլիմայով, կերակրով և հողով հարուստ երկրում ինքն իրան թողնուած մի թոյլ բնակչութիւն կապրի հազարաւոր տարիներով բուսական կեանքով, առանց կուլտուրական բարձր պահանջների, առանց նոյն իսկ հարստութիւն դիզելու, ինչպէս ակնարկում է Բոկլը: Այդ համապատասխան տեղում Բոկլը ասում է. «այն ամեն բանից ամենաառաջինը և ամենակարևորը, որ մի որ և է ժողովուրդը ստանում է կլիմայից, հողից և կերակրից-հարստու-

Թեան կիտուեմն է, ամբարումը: Բոկլի այս հայեացքը տեղահանանոց հազարաւոր օրինակներ կան Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի օրհնուած անկիւններում: Միւս կողմից այնպիսի աշխարհներում, որտեղ բնութիւնը շատ աղքատ է ու սուղ, սոցիալական կուլտուրական աշխատանքի շնորհիւ հարստութիւններ են դիզուում, որոնք յետոյ նոր կուլտուրաների հիմք են լինում:

Շատ, չափազանց շատ բան կախուած է ազգերի և ցեղերի կամքից ու նրանց հիմնական-ցեղական ունակութիւններից: Այն, ինչ որ չէր յաջողում հայ ու ընիկ Թագաւորներին, իշխաններին, շատ լաւ գլուխ բերին օտար տիրապետողներն Հայաստանում: Արաբական, մոնղոլական տիրապետութեան ժամանակ հայ իշխանները հլու հնազանդներ էին օտարին հայկական նոյն բարձրաբերձ սարերի մէջ, նոյն բնական բաժանուածութեան հանգամանքներում: Գալլերի և ֆրանկների Ֆրանսիան, անգլո-սաքսների Անգլիան չնայած որ չունէին Հայաստանի բնական բաժանուածութիւնը, սրա բազմաթիւ լեռնազաւառները, բայց և այնպէս իրանց պատմութեան ընթացքում շատ զօրեղ չափերով հանգէս են բերել կենդրոնախոյս ձգտումներ: Միջնադարեան Իտալիայի իրար բզկտող և իրար արիւն խմող բազմաթիւ իշխանութիւնների և հասարակապետութիւնների փոխարէն այժմ պատմութեան ասպարէզ է եկել միացեալ Իտալիան ներքին զօրեղ կապերով ու պետական կենդրոնաձիգ տենդենցներով: Պարզ է այս օրինակներից, որ բնական ֆակտորը, որ առաջ բերուած դէպքերում միշտ միեւնոյնն էր մնում, չէր կարող նոյն երկրի, նոյն բնակիչների վրայ զանազանակերպ ազդած լինել: Չի կարող բնութեան համահաւասար, բացարձակ ազդեցութեան մասին խօսք լինել. ամեն ինչ յարաբերական է և պայմանաւորուած: Բնութեան ազդեցութիւնը օրէնքներով արտայայտել անկարելի է, որովհետեւ ոչ թէ կատարեալ ակընյայտնիութիւնն է, այլ հաւանականութիւնը, որ ուսումնասիրութեան առարկայ կարող է լինել:

Անգլիացի Հում փիլիսոփան խօսելով իւր Essai-ներից մէկում բնութեան ազդեցութեան մասին մարդկային հոգու և մարմնի վրայ, այն միտքն է յայտնում, որ այդ ազդեցութիւնը չի կարող այնքան մեծ լինել: Ազգային բնաւորութեան բնական պատճառներ ասելով նա հասկանում է կլիմայ, եղանակ և շատ անգամ էլ կերակուր: «Նա տրամադիր եմ, ասում է նա, այդ երեքի ազդեցութիւնը ազգային բնաւորութեան վրայ տարակուսել, չիմ էլ կարծում, որ մարդիկ իրանց հոգու տրամադրութեան մի մասը օգին, կերակրին կամ կլիմային պարտական լինեն» (Essays I, XXI, of national Characters, Ratzel-ի միջոցով): Հումն առաջ է բերում ինն կէտեր, որոնք հիմնաւորելու են այդ միտքը: Յիշենք

այդ կէտերից մի քանիսը. 1) մեծ պետութիւնների մէջ, ինչպէս Չինաստանը, Հնայած կլիմայական տարբերութիւններին, ժողովրդի բնաւորութիւնը նման է. 2) իրար հարեան փոքրիկ պետութիւնները Հնայած բնական հանգամանքների նմանութեանը, յաճախ բնաւորութեան մեծ տարբերութիւններ են ցոյց տալիս, ինչպէս Թերէ և Աթէնք. 3) գաղութներ հիմնող ժողովուրդները իրանց բնաւորութիւնն ու ժողովրդական նկարագիրը տանում են իրանց հետ դէպի իրանց գաղութները. 4) միևնոյն երկրի մէջ ապրող միևնոյն ժողովուրդը զանազան ժամանակներում բնաւորութեան մեծ տարբերութիւն է ցոյց տալիս, ինչպէս հին և նոր յոյները, իրերներն ու սպանացիք, հռոմէացիք ու իտալացիները...

Հումի այս խորհրդածութիւնները մեզ բերում կանգնեցնում են պատմափիլիսոփայական մի այլ պրոբլեմի առաջ, որ սերտօրէն կապուած է բնական ֆակտորի՝ պատմութեան ընթացքի վրայ ունեցած խնդրի հետ դա ռասսայի պրոբլեմն է.

Մարդիկ կան, որոնք պատմութեան միակ և ամենազօր ֆակտորը համարում են ռասսան, ցեղային ռասսայական տրամադրութիւնները։ Այս կարգի մտածողների համաձայն որևէ ազգի պատմութիւնը պայմանաւորուած է այդ ազգի կոլլեկտիւ բնաւորութեամբ, նրա ցեղային յատկութիւններով։ Դեռ հին ժամանակներում Պլատոնն ասում էր, թէ յոյները գիտութեան համար են ստեղծուած, եգիպտացիք՝ փողի, թրակիացիք, սկիւթացիք և նրանց հարեանները՝ պատերազմական արիութեան։ Արիստոտելն հելլենին յատուկ անբարտաւանութեամբ պնդում էր, թէ բարբարոսները բնածին ստրուկներ են և յոյները ծնուած են իշխաններ լինելու համար։

Նոր ժամանակներում այս ուղղութեան ջերմ պաշտպաններից է Ֆրանսիացի Գոբլինոն, որ գրել է «Փորձ մարդկային սեռի անհաւասարութեան մասին» քառահատոր գիրքը (M. A. de Gobineau (1816—1882). Essai sur l'inégalité des races humaines I—IV Paris, 1853—55)։ Այս գրքի ղեկավարող տենդենցն այն է, որ պատմութիւնն ստեղծողը, ղեկավարողն ու առաջ տանողը ոչ թէ բնական-աշխարհագրական, ֆիզիկական, ոչ թէ մտաւոր բարոյական յատկութիւններն են, այլ ցեղերի—ռասսաների առանձնա-յատկութիւնները և նրանց տարբերութիւնները։ Ռասսայի ուժն ու զօրութիւնը ամենաբարձր, ամենապարփակ ֆակտորն է պատմութեան մէջ։ Լաւ կառավարութիւնը, բարեմիտ օրէնքները, բարձր և ազատամիտ սահմանադրութիւնը ոչինչ գին չունին ռասսայի առաջ։ Ոչ միայն ամեն տեսակ յառաջագիմութիւն և քաղաքակրթութիւն ռասսայի ամենազօրութեամբ է բացատրւում, այլ և ամենայն յետադարձ շարժում, պատմական կեանքի մէջ ամեն մի

անկում և կործանում: Ժողովուրդների մէջ թէ վերելքը և թէ գլխիվայր կործանումը ռասսայի զօրութեան, մաքրութեան կամ նրա խառնակութեան հետևանք են:

Չախիսի կարծիք, որ պատմութեան մէջ բոլոր ռասսաներն համաւասար արժէք և ընդունակութիւն ունին. սպիտակ, սևամորթ և պղնձագոյն կամ ամերիկական ցեղերից սպիտակ ցեղն է, որ միակ մղիչն ու կրողն է ամենայն բարձր քաղաքակրթութեան: Միւսները դատապարտուած են յաւիտենական անշարժութեան և պատմութեան ասպարէզ կարող են զալ միայն այն զէպքում, երբ խառնուին սպիտակ ցեղի հետ: Եւ եթէ սպիտակ ցեղի երբեմնեան հօգը կուլտուրաներից մի քանիսը կործանուել, անհետացել են, այստեղ և վերջին խօսքը կրկին ռասսային է պատկանում. այդ ևս ռասսաների խառնակման պատճառով է: Ամեն անգամ, բանի սպիտակամորթը խառնուում է սևամորթի հետ, փաստը կրում է շարունակ առաջինը և միայն զբաղւում է բացատրում Հոմի, Եգիպտոսի, Միջագետքի կուլտուրաների գլխիվայր արշաւասոյր կործանումը: Ազգերի անկումն ու կործանումը Գոբլինոն համարում է ուրեմն ռասսայի փոփոխման խառնակման, այլասերման պրոցեսսի արդիւնք: Սպիտակ ցեղը ամենախնտելիկնտն ու ամենաուժեղ ցեղն է: Եթէ այս ռասսան, ասում է Գոբլինոն, քաղաքական անյաղթելի հանգամանքների շնորհիւ ստիպուած լինէր գնալ հիւսիսային բևեռում բնակուել, կամ հասարակածի այլուղ կրակների մէջ, մարդկութեան հոգեկան աշխարհն անշուշտ այն կողմը կըտեղափոխուէր (I, 532) — մի հայեացք ուրեմն, որ միանգամայն հակառակ է բնական-աշխարհագրական ֆակտորն ընդունողներին:

Հէնց այս մոմենտումն է ահա, որ բնական-աշխարհագրական և ռասսայի ֆակտորները իրար հանդիպում, իրար շօշափում են:

Սոցիոլոգիայի նորագոյն տեսութիւնները, յատկապէս Ռացենովերի, Գումպլովիչի, Ռացելի և Օպպենհայմերի գլխաւորութեամբ բազմաթիւ ուսումնասիրութիւններով այն եզրակացութեանն են դալիս, որ ռասսա կոչուածը ինքը պարզ և էթնոլոգիական միատարր երևոյթ չէ. այլ բաղկացած բազմաթիւ տարրերից և շերտաւորումներից և արդիւնք բնական-աշխարհագրական ֆակտորի բազմաթիւ և յարատե ներգործութեան: Ի՞նչպէս է, որ այս ինչ ցեղը սպիտակ է, այս կամ այն հոգեկան յատկութիւնների տէր, իսկ միւս ցեղը սև է և հոգեկան տարրեր յատկութիւնների տէր: Գոյնի և հոգեկան յատկութիւնների տարբերութիւնը ոչ թէ ռասսայի տարբերութեան արդիւնք է, այլ բոլորովին այլ ֆակտորի ներգործութեան, մի հանգամանք, որ Գոբլինոն միանգամայն անտես էր առնում:

Երբ հարց է լինում պատմութեան ֆակտորի մասին և յիշատակում են ռասսայի և բնութեան ֆակտորները, միշտ պէտք է ի նկատի ունենալ մի հանգամանք, որ կարևոր նշանակութիւն ունի այդ հարցի լուծման համար: Ինչ կասկած, որ հերքել չի կարելի այժմ մեր առաջ ապրող բազմաթիւ ազգերի ցեղական բնութագրերի, նկարագրերի տարբերութիւնը: Մեզ բոլորիս համար պարզ է, որ ռուսն ու իտալացին, անգլիացին և արաբը, սպանացին և դանիաւրքացին նոյն մարդիկը չեն, հոգեկան նոյն կազմը չունին, ցեղական և ազգային նոյն նկարագիրը չունին: Ոչ միայն այդ. նրանք՝ այդ տարրեր ազգութիւնները և ցեղերը իրանց տարբեր հոգեկան կարողութիւններով և ձգտումներով իրանց երկրի սահմաններում հանդէս են բերում տարբեր իրողութիւններ, ստեղծում են ուրիշ պատմութիւն: Գորինոյի ակնարկած նոյն սպիտակ ցեղին են պատկանում թէ անգլիացին և թէ սպանացին, թէ սլաւոնը և թէ հրէան. բայց այսօր իրողութիւն է և այդ իրողութիւնը միշտ եղել է մեզ յայտնի պատմութեան ընթացքում, որ այդ ազգերը տարբեր պատմութիւն ունին, տարբեր պատմական կեանք են ստեղծել: Կասկած չկայ, որ մեծ դեր են խաղում այստեղ ազգային, ցեղական ռասսայական յատկութիւնները: Սակայն դրանով խնդիրը չի սպառում և ազգերի պատմութիւնն ստեղծող սկզբնական ֆակտորի հարցը դեռ չէ լուծւում: Ինչից է, որ Փրանսիացին այդ յատկութիւնների տէր է, իսկ արաբը՝ բոլորովին այլ. ինչից են ազգերի, ցեղերի կուլիկտիւ բնութագրերի տարբերութիւնները. ինչն է այդ ցեղերի այս կամ այն յատկութիւն տւողը, այս կամ այն կերպ կազմողը. դրա միակ պատասխանն է.—Մայր բնութիւնը:

Մարդկութիւնն իւր սկզբնական շրջանում, իւր այն շրջանում, երբ նա բազկացած էր բազմաթիւ այլատարր ցեղերից ու խմբերից, երբ իւրաքանչիւր փոքրիկ խումբ կամ սոցիոլոգիական մտքով ռասսա անխառն էր ու մաքրածին, ու ապրում էր երկրագնդի վրայ ոչ թէ հարիւրաւոր կամ հազարաւոր տարիներ, այլ տասնեակ ու աւելի հազարաւոր տարիներ—ահա այն նախապատմական ժամանակներում է, որ բնութիւնն իւր ստեղծագործական ամբողջ կորովը թափում է, ձուլելու, ստեղծելու ցեղերի բնութագիրը, ձևակերպելու և կազմակերպելու ռասսաների բնաւորութիւնը: Այդ նախապատմական ժամանակներում է ահա, որ բնութիւնն իւր ստեղծագործական ամենամեծ գործն է կատարել, տալով իւրաքանչիւր ցեղի և էթնոլոգիական խմբի այն նկարագիրն ու հոգեկան այն ունակութիւնները, որ նա կարող էր ստանալ նայած թէ բնութեան որ մասի վրայ էր ապրում: Ահա այն անյիշելի ժամանակներումն էր, երբ կազմակերպուել է պատմա-

կան յոյների նախապապերի խառակտերիստական, երբ բովանդակութիւն էր ստանում կելտի տաք ու կրակոտ տեմպերամենտը, երբ ձևակերպւում էր արարի երազուն, անսահման երեակայութիւնը: Մեզ թւում է, թէ հին յոյնի վրայ ազդած պէտք է լինէր Յունաստանի չքնաղ ու պայծառ բնութիւնը, անգլիացու մռայլ բնաւորութիւնը արդիւնք պէտք է լինէր հիւսիսի մշտամշուշ երկնքին: Բայց սխալն տկնեմ է, երբ ի նկատի առնենք, որ մեզ յայտնի պատմութեան ընթացքում երեցած և երեցող ազգերից և ոչ մէկը իւր սկզբնական հայրենիքում չէ եղել, դրանք բոլորը եկւոր են ուրիշ աշխարհներից, այլ գօտիներից, նրանց նախահայրերն ու նախապապերը ծնունդ են այլ կլիմաների, նրանց բնութագիրն ու ամբողջական երևոյթը կազմակերպուել է այլ երկինքների տակ: Եղիպտացիներից սկսած, որոնք պատմական ազգերից ամենահիններից են, մինչև սլաւոն ազգերը, որոնք վերջին ժամանակներս միայն պատմութեան ասպարէզ են մտել— պատմութեան մէջ չկայ ոչ մի ազգ, ոչ մի ցեղ և ոչ մի էթնոլոգիական գրուպա, որ արդէն նախապէս տասնեակ հազարաւոր տարիներ առաջ կազմակերպուած չլինէր, որի բնաւորութիւնն ու ցեղական ազգային կոլլեկտիւ բովանդակութիւնը արդէն պատրաստի կերպարանք ստացած չլինէր:

Միրափի նման ցրւում է ուրեմն այն պնդումների երկար շարանը, թէ յոյնի պատմութիւնը Յունաստանի պայծառ երկնքի արդիւնքն է. հայոց իշխանների իբր թէ կռարարութեան, անմիաբանութեան երևոյթը արգասիք է Հայաստանի բնական բաժանուածութեան և այլն: Անկասկած է, որ Յունաստանի մշտաժպիտ երկինքը ունեցել է իւր համապատասխան ազդեցութիւնն այնտեղ ապրող ժողովուրդների վրայ, բայց կարելի է ասել ամենից քիչ հէնց յոյն ժողովրդի վրայ է եղել այդ ազդեցութիւնը, որ հին յոյները Յունաստան են մտել, երբ արդէն նրանք կազմակերպուած ցեղ էին, իրանց ցեղական կոլլեկտիւ ցայտուն բնաւորութեամբ և գծերով: Ծիշտ է անշուշտ, որ Յունաստանի բնութիւնը չէ դադարել նաև այնուհետև իւր ազդեցութիւնն ունենալ իւր մօտ հիւր եկող յոյների վրայ, բայց այդ ազդեցութիւնը շատ կարճատև է եղել—հազիւ մի հազար տարի կամ մի փոքր աւելի: Եւ ամենից գլխաւորն այն է, որ այդ ազդեցութիւնն եղել է մի ժողովրդի վրայ, որ արդէն կազմակերպուած էր, որոշ ցեղական բնաւորութեան և նկարագրի տէր էր: Մի կամ երկու հազար տարին պատմութեան համար շատ աննշան բան է. մարդկութիւնն եղել և ապրել է մեզ յայտնի պատմական ժամանակներից տասնեակ և հարիւր հազարաւոր տարիներ առաջ, և տասնեակ ու հարիւր հազարաւոր տարիներով է, որ պէտք է չափել

բնութեան ֆակտորի ներդրածութիւնը մարդկութեան սկզբնական ցեղերի, ռասսաների վրայ:

Նախքան ենթադրելը, թէ այս ինչ ժողովրդի արտաքինն ու ներքինը կախուած է բնութիւնից կամ արդիւնք է բնութեան, ցեղի, կլիմայի-պէտք է հաստատապէս որոշել, թէ այդ ժողովուրդը երբուանից է այդ տեղ, այդ կլիմայի ու երկնքի տակ ապրում: Ինչքան ժամանակ է ենթակայ է բնութեան այդպիսի ազդեցութեանը և ուր էր ապրում նա առաջ: Այդ կարգի խնդիրներում չպիտի մոռանալ, որ բնութիւնից վերջնականօրէն-կազմակերպիչ եղանակով ազդուելու համար անհրաժեշտ է, որ մի որևէ ժողովուրդ շատ երկար ապրած լինի միևնոյն երկրի մէջ, նոյն երկնքի տակ: Ֆրիդրիխ Ռացելը այդպիսի շուտափոյթ եզրակացութիւնների դիմաց մի հարց է դնում, մի ծանրակշիռ և մեծ ուշադրութեան արժանի հարց. «Որտեղից գիտէք, որ այդ ժողովուրդները բաւականաչափ երկար ժամանակ այդ բնակավայրերումն են ապրում, որպէս զի կարողանային այդ բնութիւնից ազդուած լինել:—Պէտք է իմանալ, շարունակում է նա մի այլ տեղ, որ մեր նպատակը չի կարող լինել երբէք ժողովրդի և ցեղի միջև ուղղագիծ, անմիջական յարաբերութիւններ որոնել, որովհետև մենք երբևիցէ չպիտի ընդունենք, որ այն ժամանակաշրջանում, որ մեզ յայտնի է, թէ այս ինչ ժողովուրդը այդ տեղումն է ապրում, նկատելի փոփոխութիւններ հնարաւոր լինէին, նոյնիսկ եթէ մենք ընդունելու էլ լինենք, որ այդ ժողովուրդը ակնարկուած ժամանակամիջոցում օտար միջամտութիւնից և ազդեցութիւններից ազատ է մնացել (Anthropo-Geographie, 71).

Բնութեան ազդեցութեան մասին խօսելիս միշտ պիտի ինկատի ունենալ, թէ այդ ազդեցութիւններին ենթակայ ազգը կամ ցեղը արդէն պատրաստի մի ժողովուրդ է, թէ դեռ ստեղծուելու, լինելու շրջանումն է. նրա բնաւորութիւնը, հաւաքական երևոյթը արդէն ձևաւորուած է, թէ դեռ նա կազմակերպման ճանապարհի վրայ գտնւող մի ժողովուրդ է: Դա խիստ կարևոր է, որովհետև բնութեան ազդեցութիւնը տարբեր կարող է լինել երկու դէպքումն էլ:

Այս բոլոր ասածներից երևում է, որ բնութեանն է պատկանում մեծ ստեղծագործական դերը, նրանն էլ առաջնութիւնը մարդկանց այս կամ այն կերպ ստեղծելու և կազմակերպելու: Եւ բնութիւնն իւր այդ ստեղծագործական աշխատանքը մարդկանց նկատմամբ թափել է տասնեակ և հարիւր հազարաւոր տարիներ առաջ, զօրեղ և ուժգին թափով. այն նախապատմական ժամանակներում արդէն մարդիկ, առանձին խմբերն ու ռասսաները ստացել են իրանց բնաւորութեան, իրանց կոլլեկտիւ երևոյթի

քնորոշ գծերը, իրանց սոցիալական կազմակերպութիւնը: Այնուհետեւ այդ ցիղերին և ռասսաներին մեռւմ էր միայն բնութեան գծած ուղիով առաջ գնալ և զարգացնել այդ գծերը, նոյն իսկ տարրեր հորիզոնների և արեւի տարրեր ճառագայթներով տակ: Բնութեան ստեղծագործող հանճարը չի դադարել գործելուց, բայց մարդկային ցեղի նկատմամբ շատ թուլացել է: Այսքանն յամենայն դէպս ամենամեծ հաւանականութեամբ կարելի է ասել, որ բնութեան անդեցութիւնը այն ժամանարաշրջանում, որ մեզ յայտնի է որպէս պատմական ժամանակ, որ և է ազգի ազգային-ցեղային բնաւորութեան կազմակերպման և փոփոխման գործում չի նկատուում ամենեւին: Բնութեան ստեղծագործութիւնն այնուհետեւ շարունակուելու էր ժառանգականութեան միջով, սերունդէ սերունդ անցնելու էր այնուհետեւ բնութեան գործը աննկատելի և աննշմարելի փոփոխութիւններով:

Ռասսայի գաղափարը չպիտի շփոթել որ և է ժողովրդի պատմական բնաւորութեան հետ, որի վրայ առանձնապէս կանգ է առնում Քսենոպոլը իւր մի հետաքրքիր և կարևոր աշխատութեան մէջ, «Պատմութեան հիմնական սկզբունքները» (A. D. Xénopol-«Les principes fondamentaux de l'histoire»-Paris, 1899. (Այս գրքի նպատակն է, ինչպէս հեղինակն ինքն է ասում, «որոնք և հաստատել այն սկզբունքները, որոնց վրայ է հանգչում անցեալի իմացութիւնը, ցոյց տալ այդ իմացութեան կատարելապէս գիտական բնաւորութիւնը. և պատմութիւնը պաշտպանել նրա վրայ ամեն կողմից թափուող մեղադրանքների դէմ. մի խօսքով մենք կամեցել ենք հիմնաւորել պատմութիւնը—la science de l'histoire 1»):

Ռասսայի բնաւորութիւնը կազմուած է անատոմիական, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնայատկութիւններից, որոնցով և տարբերում են մարդկութեան զանազան խմբերը. մինչդեռ պատմական բնաւորութիւնը հետզհետէ է կազմուում և շարունակ էլ փոփոխուում է: Օրինակ հրէաների նուրբ միտքը, բարձր ինտելիգենցը (մտաւոր կարողութիւնները) նրանց օրգանական ռասսայական յատկութիւնն է, մինչդեռ նրանց արծաթափրութիւնը պատմութեան ընթացքում է կազմուել, նրանց պատմական բնաւորութեան գծերից մէկն է, որ անշուշտ առաջ այդ չափով՝ գուցէ ամենեւին չկար: Անգլիացիների սառնարիւնութիւնը, Ֆլեդման, լրջութիւնը—այդ բոլորը ռասսայինն են, իսկ նրանց գործնականութիւնը, մտքի և հոգու գործնական կողմը, որով նրանք որպէս ժողովուրդ աչքի են ընկնում, պատմական բնաւորութեան բերմունք է: Ռասսաները իսկապէս այնքան էլ պարզ

չեն իրանց պատճառներով, ինչպէս ձկան լողաթևերը, ինչպէս թռչունի կտուցը կամ մասկեր գաղանի ատամը: Դրանք պատմական արդիւնքներ չեն ամենակին, դրանք պատմութեան ընթացքում չեն ձեռք բերուել: Դրանք օրգանական ձևափոխութիւններ են, որոշապէս առաջ եկած երկրաբանական շրջանում արտաքին միջոցի՝ մարդկային օրգանիզմի վրայ ունեցած ամենակարող զօրութեան ազդեցութեամբ: Իսկ ընդհակառակը, ժողովուրդների պատմական քնաւորութիւնը մի արդիւնք է պատմական դարգացման: այդ քնաւորութիւնը կերպարանափոխուում է շարունակաբար և դանդաղօրէն—երևոյթների ընթացքի հետ. (հմմտ. Քսենոպոլ, 76, 77, 78):

Մեզ կարող են առարկել, թէ արդէն յոյների օրինակով իսկ կարելի է այս թէորիան ջրել, որովհետեւ մի քանի հազար տարուայ մէջ արդէն յոյները փոխուած են հանդէս գալիս. արդի յոյնը շատ քիչ բանով է նման հին՝ կլասիկ յոյնին: Նոյն առարկութիւնը կարող են անել նաև հայերի, իտալացիների և հոռմայեցիների և այլ ժողովուրդների մասին:

Այդ առարկութեան տակ թագնուած է մի խոշոր թիւրիմացութիւն, որ անհրաժեշտ է պարզել: Իրաւ է բոլորովին, որ արդի իտալացիները, որ համարւում են հին հռովմայեցիների սերունդներ, շատ քիչ բաներով միայն նման են իրանց նախորդներին. իրաւ է նոյնպէս, որ 20-րդ դարի յոյները թէև անուանապէս համարւում են հին կլասիկ յոյնի սերունդներ, բայց շատ հեռու են նրանց իրական սերունդները լինելուց: Դրա պատճառն այն է, որ ընտելութիւնը մի քանի տասնեակ դարերի ընթացքում ազդել է ու փոխել այս կամ այն ցիղին: Բնութեան ազդեցութիւնն այնքան փոքր ժամանակով չի չափւում: Պատճառն այն է, որ ցեղերն իրանք խառնուել են այլ ցեղերի հետ, միևնոյն ցեղը խառնուել շփուել է բազմաթիւ էթնոլոգիական շերտերի հետ և այդպիսով իւր արեան մէջ, որ առաջ էլ արդէն մաքուր և զուտ չէր, ներս ածել նոր հոսանքներ: Նախկին լատինների, էտրուսկների, սարինացիների, ումբրների ու այլ իտալական բազմաթիւ ցեղերի միախառնուած արիւնը հոռմէական պատմութեան ընթացքում և դրանից յետոյ խառնւում է նաև ազգերի գաղթի սկզբում ամենաուռժեղ կերպով օստգոթերի, լանգոթարդների, վանդալների, միջին դարերում նորմանների, արաբների բիւզանդացիների, ապա նորից գերմանացիների ֆրանսիացիների արեան հետ. բնական է, որ չէր կարող նախկին հոռմէացին մարդաբանական և սաղմնաբանական այդքան փոփոխութիւններից յետոյ մնալ երկու երեք հազար տարուց յետոյ նոյնը—ֆիզիկական և հոգեկան նոյն բովանդակութեամբ:

Նոյն պատկերն է ներկայացնում նաև հայր։ Մեզ յայտնի չէ ճշտապէս, թէ Տիգրան Մեծի ժամանակ և դրանից էլ առաջ հայերի արիւնը ինչ ազգաբանական տարրեր ունէր, բայց այսքանն յայտնի է, որ դրանից յետոյ Հայկական արեան այդ պարունակը գնալով աւելի և աւելի նոր շերտեր ու հոսանքներ է առնում իւր մէջ ու ժամանակի ընթացքում բոլորովին կերպարանափոխում հայի ազգային բնոյթը։ Պարսիկների, ասորիների, արաբների, թիւրքական ցեղերի—յատկապէս սելջուկների և մոնղոլների նուաճումները քաղաքական ակտեր չէին լուր հայոց համար, այլ նաև զուտ ազգային կեանքին, նրա ներքին հոգեկան ու ֆիզիկական անկախութեանն սպառնացող ու կերպարանափոխող փոթորիկներ, որոնք առանց հետևանքի չանցան հայ երկնքով։ Եւ այսօր դրականապէս պնդել կարելի է, որ այսօրուայ հայը ազգագրական տեսակէտից տարրեր մարդ է, քան նախնական մարդը։

Եւ այդ ոչ միայն իտալացու, հայի, յոյնի այլ շատ կամ քիչ չափով գոյութիւն ունեցող բոլոր ազգերի համար։ Ազգագրական նոր շերտերի ազդեցութեան տակ ազգերի երակների մէջ հոսող արիւնը շարունակ կերպարանափոխւում է, դանդաղօրէն փոխում է իւր բովանդակութիւնը։ Այս գործում բնութիւնը չէ որ յեղափոխող դեր է կատարում. աշխարհագրական—բնական ֆակտորը չէ, որ ստեղծում է ազգերի պատմութիւնը։ Նա իւր ստեղծագործական մեծ գործը արդէն կատարել է նախապատմական ժամանակներում, սահման դրել ու հանդէս բերել մարդկային գրուպպաների, ռասսաների մի ահագին բաղմութիւն, տարրեր նկարագրով, տարրեր հոգեկան կազմով ու ֆիզիկական արտաքինով։ Բնութեան այդ վճռական ակտից յետոյ ցեղերին իրանց է մնում շարունակել նրա այդ ստեղծագործութիւնը և փոխազդեցութիւններով երևան բերել հետզհետէ նորանոր երևոյթներ և իրօք դառնալ պատմութեան կրողը։ Ցեղերի խառնուելը և մասսայական յատկութիւնների ժառանգականութիւնը իրօք կրող են հանդիսանում այժմ ազգային խմբական ռասսայական բնութագրերի և հաւաքական կերպարանքների։

Արդի ազգերը բոլորն առանց բացառութեան շատ կամ քիչ չափով արդիւնք են ցեղական խառնուրդի, որը կամ պատմական ժամանակներում է եղել և դեռ կատարւում է մեր աչքի առաջ և կամ արդէն նախապատմական ժամանակներում կորցրել է իւր մաքրութիւնն ու զտութիւնը։ Միևնոյն ազգի մէջ դանազան ցեղերի հետքերը հեշտութեամբ կարելի է նկատել նոյն իսկ այժմ։ Շատ ազգեր իրանց մէջ երկու կամ երեք տարրեր տեսակի բնաւորութիւն ունին։ Ռացիլը օրինակներ է բերում այդ երկտիպանի ազգերի համար նախ բելգիական ազգը, որ բաղկացած է արդիւ-

նարեբող վալլոններից և ծովային արուեստի մէջ ճարպիկ ֆլեմ-
ներից. ապա սաքսոնական և կելտական Շոտլանդեան, ապա նաև
Միացեալ Նահանգների բնակչութիւնը մեծ մասով բաղկացած
երկրագործական-գերմանական և արդիւնաբերական-կելտական
և այլն: Շրվալիէն (M. Chevalier) շատ գեղեցիկ կերպով է պատ-
կերացրել երկտիպանիութեան առաւելութիւնը:

«Պակաս առաւելութիւն չէ, ասում է նա, մի ազգի համար
իւր ծոցում իրարից բոլորովին տարբեր ֆիզիանոմեայի երկու
տիպեր ունենալը, երբ դրանք խաղաղ կերպով մի հատիկ ազ-
գութեան մէջ միասին ապրում են: Մի ազգ, որի անհատները
բոլորն էլ միեւնոյն տիպին են պատկանում, ժողովուրդների մէջ
այն վիճակն ունի, ինչ վիճակի մէջ է որ ծերացած ամուրին
մարդկանց շրջանում. նրա կեանքը միապաղաղ և միաձև է, իւր
մէջ փակուած, անշարժ, ոչինչ չի մղում նրան զէպի առաջադի-
մութիւն: Հին եգիպտոսը այդ տեսակի էր: Երկտիպանի ժողո-
վուրդը ընդհակառակը ուրախ է և երջանիկ, որ ունի հնարաւոր
երջանիկ կեանք, եթէ միայն այդ երկու տիպերից ոչ մէկը միւ-
սի նկատմամբ ոչնչացնող գերակշռութիւն չունի: Նրա կեանքը
յարատե փոխանակութիւն է զգացմունքների և մտքերի, նման
երկու ամուսինների կեանքին: Նա ունի իւր մէջ պտղաւէտութեան
տուրքը. նա հէնց ինքն իրանից նորա նոր երիտասարդանում է:
Երկու բնաւորութիւններից իւրաքանչիւրը կարող է գործող և
հանգստացող լինել, ամբողջութիւնը սակայն երբէք պարապ չէ,
միշտ ստեղծող, միշտ ստեղծագործող: Երբեմն մէկն է գերակշիռ
գիրք ձեռք բերում, երբեմն միւսը և ամբողջ ազգը վայելում է
զանազան շնորքների և ձիրքերի առաւելութիւնը: Այդ երկու
բնաւորութիւններն իրար մղում են տալիս շարունակ, երբեմն
մէկը միւսին օժանդակում է, երբեմն առաջ է վանում. և ժողո-
վուրդը, որ այդ երկուսը իւր մէջ է պարփակում հէնց դրանով
գերազոյն բախտերի հանդէպ է գնում»:

Ռասսան կամ ցեղն այսպիսով, ինքը գերազանցօրէն լինելով
բնութեան ֆակտորի արդիւնք պատմութեան յետագայ ընթացքի
մէջ դառնում է ուժեղ ֆակտորներից մէկը: Սրանից պարզ է, որ
բնութիւնը մարդկութեան մանուկ հասակում աւելի զօրեղ կեր-
պով է ազդում նրա մտքի, երևակայութեան, նրա բովանդակ հո-
գեկան աշխարհի վերայ, քան քաղաքակրթութեան բարձր աստի-
ճաններում: Մահուան և ապագայ կեանքի, հոգու անմահութեան,
հետևապէս և կրօնական հասկացողութիւնների սաղմերը նա յղա-
նում է իւր մէջ այդ հասակում մեծագոյն մասամբ բնութեան
ուժգին ազդեցութեան տակ:

Սակայն այն նախադասութիւնը, թէ մարդ գնալով աղատ-

ւում է ընտելեան ազդեցութիւնից և նրա շղթաներից-պէտք է որոշ վերապահումներով առնել: Եթէ կուզէք կուլտուրայի, քաղաքակրթութեան տեսակէտից մարդկութիւնն աւելի և աւելի անխզելիօրէն է կապւում ընտելեան հետ, քանի նա վեր է ելնում դէպի կուլտուրայի բարձրունքները: Թէև մարդ կուլտուրայի յառաջխաղացման հետ հետզհետէ դառնում է ընտելեան տէրն ու թագաւորը, բայց դա լոկ ըստ երևոյթին է: Քանի ընական և տեխնիկական գիտութիւնները ընտելեան նորանոր գանձեր են բաց անում մարդկութեան կուլտուրայի քաղաքակրթութեան համար անհրաժեշտ, այնքան մարդը ընտելեան հետ կապւում է անխզելիօրէն, այնքան նա դառնում է ընտելեան իրական ստրուկը: Մարդկութեան բախտն անքակտելիօրէն կապւում է ընտելեան երկրի բախտի հետ: Այդ կողմից ընորոշ են Ռացելի հետեւեալ իմաստալից խօսքերը. «Երբ մենք ընտելիւնը աւելի մանրամասնօրէն ուսումնասիրում և շահագործում ենք, դրանով ընդհանուր առմամբ ընտելիւնից չենք ազատւում աւելի, դրանով մենք անկախ ենք դարձնում մեզ միայն ընտելեան առաջ բերած պատահարներից: Հէնց մեր այս բարձր կուլտուրայի պատճառով մենք բոլոր ժողովուրդներից, որոնք երբ և իցէ եղել են, ամենից սերտօրէն կապուած ենք ընտելեան հետ» (Anthropo-Geographie 88.)

Նախքան ընտելեան և ռասայի՝ որպէս պատմութեան ֆակտորների մասին գրածս գլուխը վերջացնելը, անհրաժեշտ եմ համարում գաղափարների պարզութեան համար մի անգամ ևս կրրկնել, որ ռասայ-ցեղ գաղափարը ես վերցնում եմ հետեւելով Գումպլովիչին, Ռացենհովերին, Օպենհայմերին և հասկանում եմ դրա տակ ոչ թէ այն, ինչ որ Գորինոն, որը ամբողջ մարդկութիւնը բաժանում էր ըստ մարմկանց մորթի գոյնի (սպիտակ, դեղնագոյն, սև...) այլ ընակշնութեան այն էթնոլոգիական տարրերը, որոնք նախնական պետութեան էմբրիոն են կազմում: Այլապար այլաձին խմբեր, որոնք ամենուրեք տարածուած են նախապատմական ժամանակներում-ահա դրանք են ռասաները. այդ ռասաները ոչ թէ երեք են կամ չորս, ինչպէս Գորինոն է ընդունում, այլ անթիւ և անհամար, ցրուած ամեն տեղ, իրար հակառակ, իրար դէմ: Երկու կամ աւելի այդպիսի այլաձին ցեղերի ընդհարման երկարատե հակամարտութեան արդիւնքը լինում է այս կամ այն ցեղի նուաճումը-կազմում է նախնական պետութիւնը և սկիզբ է դնում մարդկային քաղաքակրթութեան: Նախնական սկզբնական պետութեան մէջ է ահա, որ բաղմաթիւ այլաձին և այլատարր ռասաները հետզհետէ ձուլւում են աւելի և աւելի մեծագոյն խմբակցութիւնների:

Մեր տեսակէան ուրեմն հիմնովին տարբեր է Գորինոյի ռաս-

սայական թէորիայի տեսակէտից. որը ընդունելի չէ մեր կողմից նաև այն պատճառով, որ Գորինոն և նրա հետևողները պնդում են, որ սպիտակ ցեղն է, որ միակ արժանի է ուշադրութեան և ընդունակ զարգացման. դրանով հակառակ են գնում նրանք ընդհանուր տիեզերական օրէնքին: Երբ Գորինոն իւր գիրքը գրում էր, դեղին ցեղի ներկայացուցիչներին մէկը՝ Եապոնիան պատրաստւում էր իւր խաղաղ յեղափոխութիւնն անել և քաղաքակիրթ ազգերի շարքն անցնել. այսօր ոչ մի քաղաքակիրթ ազգի համար Եապոնեան անքաղաքակիրթ չէ. այսօր մոնղոլական ցեղի այս կամ այն ներկայացուցիչը, յատկապէս իրանց ինքնայատուկ քաղաքակրթութեամբ և պատկառելի կուլտուրայով ցոյց են տալիս բարձրագոյն քաղաքակրթութեան ճանապարհով գնալու անվիճելի ընդունակութիւն և պատրաստականութիւն: Գորինոյի մտքով հասկացուած ռասայական թէորիայի ամբողջ շէնքը կառուցուած է ներկայի տեսակէտով. ներկայ մոմենտում մարդկային ցեղերն այսպէս են դասաւորուած. սպիտակը գերակշռող տեղ է բռնում. մարդիկ կարծում են, որ այդպէս մնալու է, որ այդպէս էլ լինելու է, որ դա անշարժ և բնական է. պարզ է, որ պատմութիւնն ամեն օր դրա դէմ բազմաթիւ փաստեր է բերում: Անվիճելի է անշուշտ, որ սպիտակ ցեղին պատկանող ժողովուրդները աւելի մօտ յատկութիւններ ունին քան սևամորթ կամ դեղնագոյն ցեղերը: Բայց ինչպէս ասացի, պատմական զարգացման ընդհանուր տենդենցները տանում են դէպի ցեղերի ընդհանուր ամալգամացիա-ձուլում, դանդաղօրէն և յամբընթաց, բայց հաստատուն և անսայթաքօրէն:

Դ. Ալբուհեան

